Ներքին Հանդ

Բնակչություն՝ 100

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 36 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 950 մ

Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Ներքին Հանդ գյուղը վերաբնակեցվել է 1827-28թթ. Իրանի Վինա և Ղարաբաղի Քարագլուխ գյուղերից եկած մի խումբ ընտանիքների կողմից: Նախկինում այստեղ գյուղ է եղել, որը վկայում է մինչ այսօր կանգուն եկեղեցին: Ներկայիս Ներքին Հանդ գյուղը հիմնվել է 1980-ականների սկզբին՝ հին գյուղից 1.5-2 կմ դեպի հարավ արևելք ընկած «Սեկտար» կոչվող հանդամասում: Ներքին Հանդը, լինելով սահմանամերձ գյուղ, պաշտպանական և ռազմավարական տեսանկյունից կարևոր նշանակություն է ունեցել հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում և 1991-93թթ. պատերազմական գործողությունների ժամանակ զգալի տուժել է: 1993թ-ին ազերիները ներխուժել են գյուղ և հրդեհել այն: Մեկ տարի անց՝ 1994թ. հանդեցիները կրկին վերադարձել են գյուղ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 6079 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 241 հա, որից՝
- վարելահող՝121 հա, խոտհարք՝ 9 հա, արոտ՝ 78 հա, այլ հողատեսք՝ 33 հա
- բնակավայրերի հողեր՝ 33 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝6 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5421 հա,
- անտառային հողեր՝370 հա, որից անտառածածկ՝ 361 հա
- ջրային հողեր՝ 7 հա